

ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Գնել Սանոսյանի շնորհավորանքի խոսքը ԱԻՆ աշխատակցի օրվա առթիվ

04.09.2020

«Հարգելի՛ հայրենակիցներ, այսօր նշվում է այն կարևորագույն կառույցի տոնը, որի անդամները շուրջօրյա և պատասխանատու ծառայության մեջ են արտակարգ իրավիճակների ընթացքում: Նրանք փրկարար առաքելություն են իրականացնում ամենատարբեր վայրերում: Մեր փրկարարների անձնուրաց աշխատանքն ու մասնագիտական հմտությունը բազմաթիվ մարդկային կյանքեր են փրկել, աղետալի և վտանգավոր իրավիճակներ կանխել: Փրկարարների արհեստավարժ ու մարդասիրական աշխատանքը բարձր գնահատանքի է արժանի: Թերեւս, երախտագիտության խոսքերը քիչ են՝ արժեւորելու այն կարեւորագույն առաքելությունը, որն ամենօրյա անձնագոհության գնով եւ պարտքի գիտակցումով իրականացնում են մեր փրկարարները: Միւրեւի՛ փրկարարներ, եւ մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիդ: Անփորձանք ծառայություն և առողջություն եմ մաղթում ձեզ և ձեր ընտանիքներին: Ցանկացած արտակարգ իրավիճակում տոկոնություն ու զգուշություն եմ ցանկանում»:

Հարգանքով՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ՝ Գնել Սանոսյան: